

# ԵՐԵՒԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐՎԱՆ ԸՆԴԱՌԱՋ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՀԻՇԵՑՈՒՄ

15.05.2018 10:15



Հիշեցնում ենք, որ Երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ ՀՀ փաստաբանների պալատը երկու մրցույթ է հայտարարել:

5-ից 15 տարեկան երեխաների նկարների (գեղանկար, մատիտանկար, լուսանկար, ցանկացած տիպի թղթային կրիչով նկար) մրցույթ՝ ԵՍ ՔՆՆԱԴԱՏՈՒՄ ԵՄ ԱՆԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ թեմայով: Երեխաներն ազատ են ստեղծագործելու հարցում:

Մրցույթին մասնակցող երեխաներին խնդրում ենք մինչև 2018 թվականի մայիսի 24-ը [press@advocates.am](mailto:press@advocates.am) հասցեին ուղարկել աշխատանքների լուսանկարները, կարող եք նաև աշխատանքներն անձամբ բերել Փաստաբանների պալատ և հանձնել մամուլի խոսնակ Ծովինար հաշատրյանին:

Եթե նախընտրում եք էլեկտրոնային նամակ ուղարկել, ապա կցում եք աշխատանքի լուսանկարը և ուղղակի նշում մասնակից երեխայի անունն ազգանունը, տարիքը, նկարի տեսակը, ինչպես նաև ուսումնական հաստատության անվանումը:

Մրցույթը կամփոփվի հունիսի մեկին ՀՀ փաստաբանների պալատում: Սպասվում են հետաքրքիր մրցանակներ:

Հարցերի համար զանգել Պալատի մամուլի խոսնակ Ծովինար հաշատրյանին 094 536002:

### Երկրորդ մրցույթի մասին

Փաստաբանների պալատը 5-ից 15 տարեկան երեխաների համար հայտարարում է խաղաղության, ընկերասիրության, հայրենասիրության և պատասխանատվության վերաբերյալ կարգախոսների մրցույթ:

Մրցույթին մասնակցող երեխաներին խնդրում ենք մինչև 2018 թվականի մայիսի 25-ը կարգախոսներն ուղարկել [press@advocates.am](mailto:press@advocates.am) հասցեին: Էլեկտրոնային նամակում ուղղակի նշվում է երեխայի անունն ազգանունը, տարիքը, նկարի տեսակը, ուսումնական հաստատության անվանումը:

Հարցերի դեպքում զանգել Պալատի մամուլի խոսնակ Ծովինար հաշատրյանին 094 536002: